ին նոր մարդիկ բերել հասարակական գործերի մէջ, իսկ ինքը իր հերթում ամէն ինչ կանէ)։ Գրիգոր ք. Գրիգորեանի ծխ. Մ. Կանգաճեանին և Պատ. Մատուռեանին։

Զը մոռանամ ասել, որ սրբազան առաջնորդի այդ ձևի կատարած ընտրութիւնը հանգ. Արիմեան կաթողիկոսը տարիներ առաջ վաւերացրել և կարգադրել է, սակայն մեր հոգաբարձուներից մի յայտնի խմբակ ճնշում գործ դրին նախկին գործակալ հ. Զաւէնի վրայ, որը անհետանալը թողեց ժողովրդական ընտրութեան սխտեմը, բայց այդ սխտեմը ներկայումս դարձեալ զուրխ բարձրացրեցՍակայն,ինչպէս լսում ենք, բացակայ (միայն այդ ժողովներից) հոգաբարձութիւնը միջոցներ է որոնում այդ մեծ նուիրաբերութեան գործը կենարօնացնել իր խմբակի ձեռքին։ Մնում է, որ ծխականներից ընտրված 16 պատգամաւորները միահամուռ ոյժով նուիրվեն իրանց վրա դրված գործին, որի նախագահը Ամենայն Հայոց Կաթողիկոսն է։

Ս. Գարագաշ

ԵՐԿՈՒ ՕՐ Է.ՋՄԻԱԾՆՈՒՄ

(Հայ տառերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի առիթով)

—

Մ. Դերձակեանը երկու յօդուած էր լոյս ընծայել «Մշակի» № 99-ում և 109-ում (1912 թ.)։ Այդ յօդուածներում նա այն միտքն էր յայտնել, որ հայկական տպագրութեան 400-ամեակը աւելի փառաւոր դարձնելու համար աւելի հարկաւոր է և շատ յարմար, որ Սուրբ Գիրքն աշխարհաբար և մատչելի լեզուով տպագրվի Էջմիածնում, և Վեհ. Կաթողիկոսի կողմից հաստատվի ու տարածվի հայ ժողովրդի մէջ։

Նա յայտնել էր նոյնպէս, որ բրիտանական և արտաքին Աստուածաշունչի ընկերութիւնը պատրաստ է Սուրբ Գիրքը Էջմիածնում տպագրելու համար՝ բոլոր ծախքերը վճարել իր սեփական միջոցներից և այլն և այլն։

Ես շատ տարիներից ի վեր, իբրև անդամ յիշեալ Աստուածաշունչի ընկերութեան, Սուրբ Գիրքը Էջմիածնում տպագրելու և ժողովրդի մէջ տարածելու ջերմագին փափաք էի յղացած ընկերութեան ծրագրում։ Եւ հէնց այդ պատճառով էլ ընկերութեան զանազան գործակալները մի քանի անգամ դիմել են Էջմիածնի սինոդին զանազան կաթողիկոսների օրով, և միշտ խնդրել են նրանց բարի աջակցութիւնը, որ Սուրբ Գիրքը Էջմիածնի սինոդի կարգադրութեամբ տպվի և ընկերութեան միջոցներով տարածվի հայ հասարակութեան մէջ հիշդ այնպէս, ինչպէս այդ անում է ռուսաց սինոդը, ընկերութիւնն՝ Ռուսաստանում Սուրբ Գիրքը տարածելու օրից ի վեր, որը 40 տարիներից աւելի է։

Եւ նոյնիսկ հէնց այս նպատակի համար ընկերութիւնը մի տպարան է ուղարկել Էջմիածին, որ Ս. Գիրքը տպագրվի։ Եւ ամէն անգամ էլ բարի խոստումներ են եղել կաթողիկոսների կողմից, որ մոռպիր են անելու՝ ինչ որ կարող են, բայց և այնպէս մինչև օրս հայ ժողովուրդը զրկված է և չունի Մայր Աթոռը կառավարող վեհապետների կողմից վաւերացված Ս. Գիրքը։

Անցեալ օգոստոսի 31-ին Երեանից Վառան Միքայէլեանցի ընկերակցութեամբ գնացի Էջմիածին Վեհափառ Կաթողիկոսին ներկայանալու Ս. Գիրքը աշխարհաբար տպագրելու համար բրիտանական Աստուածաշունչի ընկերութեան ծախքով։ Դեռ կառքից վար չիջած, ուղեկիցս տեսնվեց Մեսրոպ վ. Մագասեանի հետ իբրև վարչական ծանօթներ, և յայտնեցինք մեր գնալու նպատակն ու միաժամանակ խորհուրդ հարցրինք, թէ ինչ կերպ կարելի է ներկայանալ Վեհ. Կաթողիկոսին և խօսել յիշեալ խնդրի վերաբերմամբ։

Հայր սուրբը խորհուրդ տուեց նախ դիմել Կարապետ եպիսկոպոսին և նրա խորհուրդն հարցնել իբրև աստուածաբանի և մասնագէտի։ Կարապետ սրբազանը շատ յարգանքը ու սիրալիր ընդունեց մեզ։ Երբ մենք ծանուցում տուինք, թէ ով ենք և ինչ բանի համար ենք դիմել իրան, սրբազանը ասաց.

— Ես կողմնակից եմ այդ գաղափարին, և եթէ ինձ որևէ բաներ հանձի այդ ձեռնարկութեան մէջ, ամենայն պատրաստակամութեամբ ու սիրով կը կատարեմ։

Ցետոյ Կարապետ եպ. ասաց, թէ ինքը կասկածվում է իբրև ընդարձակ հանդուրժողութիւն տէր մէկը և այժմ էլ չէ ուզում ոչ մի գործի խառնվել այլ խնդրել է Վեհափառից, որ ազատ լինի և իր ժամանակն ու տաղանդը նուիրէ գրական աշխատանքին։ Ուստի խորհուրդ տուեց մեզ առ այս դիմել Սուքիաս արքեպիսկոպոսին և նրա միջոցով Կաթողիկոսին։

Ցաջորդ օրը ներկայացանք Սուքիաս արքեպիսկոպոսին, որը շատ սիրալիր և ուրախ ընդունելութիւն ցոյց տուեց մեզ։

Ես մասնաւոր կերպով բացատրեցի սրբազանին Աստուածաշունչի ընկերութեան ծրագիրն ու նպատակը ամբողջ աշխարհում և ի միջի այլոց Ռուսաստանում նրա կատարած գործը։ Ապա մենք Սուքիաս սրբազանի առաջնորդութեամբ գնացինք հիւրընկալ Սիսն վարդապետի մօտ։ Մեզ ներկայացնելով հիւրընկալին՝ սրբազանը ասաց.

— Այս պարոնները ցանկանում են տեսնել Վեհափառին և յայտնել, որ բրիտանական Աստուածաշունչի ընկերութիւնը ներկայիս պատրաստ ունի նոր կանոնաւոր աշխարհաբար սրբազրեալ հայերէն Թարգմանութիւնն և ցանկանում է միայն կաթողիկոսի բարեհաճ թոյլտրութիւնը, որ իր իսկ ծախքով տպագրէ Էջմիածնի սրբարանում ի դէպ հայ տառերի գիւտի 1500-ամեակի և հայ տպագրութեան 400-ամեակի։

Ապա մենք կրկին Սուքիաս սրբազանի բարեհաճ մասնակցութեամբ դիմեցինք դէպի Եմարան՝ այդ հարցի առիթով տեսնելու դիւանապետին։

Ես յայտնեցի հ. Բագրատին, որ բրիտանական և արտաքին Աստուածաշունչի ընկերութիւնն իմ միջոցով փափաք է յայտնում նոր կանոնաւոր հայերէն աշխարհաբար սրբազրված Թարգմանութիւնը տպագրութեան յանձնել Էջմիածնի տպարանում Հայոց Կաթողիկոսի բարեհաճ թոյլտրութեամբ, խոստանալով հոգալ տպագրութեան և այլ բոլոր ծախքերը, յաւելցնելու համար հայ տառերի գիւտի 1500-ամեակը և հայ տպագրութեան 400-ամեակը, որ ի մօտոյ պիտի տօնվի համայն հայ ազգի կողմից։ Եւ այս կերպով Էջմիածնի տպարանը ազատ կը մնայ բոլոր ծախքերից և կունենայ մի խոշոր եկամուտի մշտական աղբիւր, որովհետև կասկած չը կայ, որ նոր-կտակարանը տպագրելուց յետոյ կը ձեռնարկվի նաև հին-կտակարանի սրբագրութեանը և տպագրութեանը։ Եւ այսպէս՝ Ս. Գրքի տպագրութիւնից Էջմիածինը միայն օգուտ կը ստանայ, շարունակ ազատ մնալով ամէն մի ծախքից, իսկ հայ ժողովուրդը մայրենի հասկանալի բարբառով ս. Գիրքը։

Դիւանապետը յայտնեց, որ մեր առաջարկութիւնը սկզբունքով արդէն ընդունված է և նախկին կաթողիկոսի մահը միայն խափան եղաւ նրա իրագործմանից։ Իսկ այժմ,—աւելացրեց նա,—եթէ ընկերութիւնը ցանկանում է, թող նորից բանակցութեան մէջ մտնէ այդ խնդրի վերաբերմամբ, թող խնդրի հետ միասին ուղարկէն մեզ սրբազրված նոր կտակարանը, և նրա հետ տպագրութեան պայմանները՝ այստեղ Վեհափառի կողմից հաստատվելիք ուսումնական ժողովին յանձնելու ի քննութիւն։ Ես ինքս էլ իմ կողմից շատ ուրախ եմ և կողմնակից աշխարհաբար Ս. Գրոց տպագրութեանը և տարածմանը, մանաւանդ Էջմիածնի միջոցով։ Դիւանապետը ցոյց տուեց մեզ նաև ուսումնական խորհրդի արձանագրութիւնը, ուր հարց էր բարձրացել յաւելցնել տառերի գիւտի և հայ տպագրութեան տօնը «Աստուածաշունչի» աշխարհաբար տպագրութեամբ։ Բայց խորհուրդը, տեղեկանալով նախագահից որ Ս. Գրոց աշխարհաբար թարգմանութեան տպագրութեան հոգը իր վրա է վերցնում Աստուածաշունչի ընկերութիւնը, այդ հարցը փակված է համարում։ Դիւանապետը այն միտքը յայտնեց, որ սրբազրված նոր կտակարանը գուցէ թերի կողմեր ունենայ, և այդ դէպքում նորից պիտի սրբազրվի։

Ես իմ կողմից յայտնեցի, որ ընկերութիւնը մեծ ուրախութեամբ կը վարձատրէ, եթէ կարիք լինի նորից սրբազրելու։

Էջմիածնից թիֆլիս վերադառնալով՝ անմիջապէս հարկաւոր կարգադրութիւնները արեցինք, և այժմս սրբազրված ամբողջ նոր կտակարանը և նրա վերաբերեալ խնդիրները միասին գտնվում են Էջմիածնում։ Լիապէս ենք, որ հայ ժողովուրդը իր աչքերով կը տեսնէ նոր-կտակարանը Էջմիածնում տպագրված Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի թոյլտուութեամբ և վրան գրված այս նկատողութիւնը. «Տպագրված ի յիշատակ հայկական տառերի գիւտի 1500-ամեակի և հայ տպագրութեան 400-ամեակի»։

Յակոբ Արուշանեան

Ախալքալաք

ԴԵՐԵՎԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը հրատարակել է նոր պարտադիր կանոններ զէնք կրելու և պահելու թոյլտուութեանը վերաբերեալ։ Հրաձգների թոյլտուութիւնը վերացվում է նահանգապետին։ Նոր կանոնները տպվում են պաշտօնական «Кавказъ» թերթում։

◆ Թիֆլիսում են Երեանի և Գանձակի նահանգապետները բարձ. Տիկնհնուզէնը և Կօվալէվը։

◆ Կիրակի, յունվ. 27-ին, քաղաքապետը, վարչութեան անդամները և հանրապարանական մասնաժողովը ձախանորոգեխ նիկոլերի հետ կայցելեն Նարիզ՝ դիտելու հանրապարանի համար յատկացված հողաբաժինը։

◆ 1912 թուի ընթացքում քաղաքային ծննդաբերական ապաստարանն են այցելել 111 յղի կին, 1341 ծննդկան, 270 վիժողներ։ Տարվայ ընթացքում ծնել են 1611 կանայք։ Մնվել են 635 կենդանի տղայ, 29 մեռած, 640 կենդանի աղջիկ և 28 մեռած։ Մնվածներից մեռել են 32։

◆ Կովկ. Հայոց Հրատ. Ընկ. խմբագրական մասնաժողովի նախագահ Գիւտ աւագ քահ. Աղանեանը, յիշեալ Ընկ. ընդհ. ժողովի համաձայն, ճանապարհորդել է Բաքուի